



Բեկայար

Ադրբեջանական զորքերը բարոյալքված են և փախչում են Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի ճնշման ներքո: Այդ ուժերը վերահսկում են Քելբաջարի և Ֆիզուլու շրջանների որոշ բնակավայրեր: Ամեն ինչ հանգեցվում է այն բանին, որ Հայաստանին մեղադրեն հարևան պետության՝ Ադրբեջանի դեմ ագրեսիայի համար:

Եվ ահա արդեն Թուրքիայի վարչապետ պարոն Դեմիրելը աներկիմաստորեն հայտարարում է, որ Ադրբեջանին օգնելու համար «Թուրքիան պատրաստ է ցանկացած զոհաբերության»: Իսկ ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցիչ Մուսաբաթա Ակչինը էլ ավելի վճռականորեն է արտահայտվում. «Հայկական ագրեսիան երբևէ չի դադարում և Թուրքիայի կառավարությունը կչեղանարկի բոլոր ընդհուպ մինչև ռազմական միջոցները»:

Եվ օրինական հարց է ծագում. իսկ այսօր ի՞նչ գործ ունի Հայաստանը: Ինչու՞ են հենց նրան մեղադրում ագրեսիայի համար: Չէ՞ որ բոլորն էլ հասկանում են, որ փվյալ դեպքում պատերազմող կողմերը Ադրբեջանն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն են: Կարծում են, որ ազգային գործոնը, իսկ միգրացիոն սահմանակցանք, այսօր բնավ էլ վերջին դերը չի խաղում: Լեռնային Ղարաբաղում ապրում են հայեր, որոնք ուզում են խաղաղ գոյակցել ցանկացած հարևանի հետ. նրանք պարզապես հոգնել են մշակական պատերազմից:

Այն ժամանակ, երբ ադրբեջանական զորքերը հաջող մարտական գործողություններ էին վարում ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերի դեմ, չգիտես ինչու ոչ ոք նույնիսկ մի բառ չասաց ադրբեջանական ագրեսիայի մասին, թեև արդեն մի քանի փարի շարունակ

փաստորեն ամբողջ աշխարհից կտրված Ղարաբաղը սարգապես ոչնչացվում է ադրբեջանական զինված կազմավորումների կողմից: Վերջապես չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման շուրջ գրեթե բոլոր բանակցությունները փեղի են ունեցել առանց ԼՂՀ-ի ներկայացուցիչների մասնակցության: Այսինքն այն ժողովրդի, որն ինքն իրավունք ունի որոշելու իր բախար:

Ահա թե ինչու Հայաստանում այդպես լիցքներն ընդունեցին Թուրքիայի մեղադրանքներն իրենց հասցեին. ում-ում, բայց հայերին լավ է հայտնի, թե ինչ կարող են անել թուրքերն իրենց ժողովրդի հետ (հիշեցնեն, թե ինչպես դարասկզբին հենց Թուրքիան ոչնչացրեց ավելի քան մեկուկես միլիոն հայ): Մի՞թե հիմա էլ պարոն Դեմիրելն ու նրա ներկայացուցիչները նույն բանն են երազում:

ՄԱԿ-ում Ֆրանսիան և Ռուսաստանը չուղաղակեցին Ադրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիայի» դատաարկումը: Իսրայելն էլ հրաժարվեց այդ հարցում դիվանագիտական աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, թեև Աբուլֆազ Էլչիբեյը այդ մասին անմիջականորեն խնդրել էր Իսրայելից Բաբի-նին:

Դե ինչ, ուրեմն կան սթափ ուղեղներ, որոնք հասկանում են, եթե պետությունը չի համաչայնում բանակցությունների սեղանի շուրջ նստել իր հակառակորդի հետ, չնայած դա կապարելու բազմաթիվ հորդորներին, ապա ակնհայտ է, որ այդ պետության գործողությունները, նրա դիրքորոշումը խոցելի են:

Վիկտոր Խլիստուն
«Սոբեսեդնիկ» . թիվ 15, 1993թ.

Թե՛՛ կեպ

... **ԳՈՒՄԱՐԱՆԺ**
ՂԵՄԻՐԵՆԼԻՉԱՅՈՒՆ